ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 29

30/04/2019

,,ԹՈՓ ԴԱՐԻ ՏԱԿ,, ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ
ՉԱՓԱԳՐՄԱՆ , ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԵՎ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ-ի մասին օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով և ՀՀ Կառավարության 06.04.2006թ.-ի թիվ 538-Ն որոշմամբ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Կառավարության 06.04.2006թ. թիվ 538-Ն որոշմամբ Աստղաձոր համայնքի «Թոփ դարի տակ» կոչվող տարածքում 097-005 և 305-001 կադաստրային ծածկագրերով համապատասխանաբար 6.08 հա և 8.13 հա պետական սեփականություն հանդիսացող հողերից Աստղաձոր համայնքին անհատույց փոխանցվել է որպես գյուղատնտեսական վարելահող: Սակայն , իրականում , բնության մեջ նշված տարածքում հողամասի չափսերը կարող է չհամապատասխանեն ՀՀ Կառավարության 06.04.2006թ. թիվ 538-Ն որոշման տվյալների , հարևան Զոլաքար համայնքի հետ ունեցած սահմանային խնդրի պատճառով: Հետագայում նշված վարելահողերը ըստ նպատակային օգտագործելու վարձակալական հիմունքներով տրամադրելու կամ օտարելու համար առաջարկել Աստղաձոր համայնքի ղեկավարին համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների միջոցով նշված տարածքի հողամասերի համար կատարել չափագրում և քարտեզագրում , մեկ միավոր վարելահողի համար սահմանել 1 հա տարածք , ապահովելով նշված վարելահողերի համար ընդհանուր օգտագործման ճանապարհների և ոռոգվող վարելահողերի համար ոռոգման առուների առկայությունը , կազմել համապատասխան հողաշինարարական փաստաթղթեր նշված հողամասերին իրավունքի պետական գրանցում տալու համար: Քարտեզագրման ,

հողաշինարարական աշխատանքների , չափագրման և պետական գրանցման ծախսերը ըստ պայմանագրի կատարել համայնքի բյուջեի հաշվին:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԴԱՎԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԿՆՅԱՋՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ